ՀԵՌԱԳԻՐ

Կիլիկիայի հայկական ջարդերի մասին կարդալով լրագրերում Նորին Ամենապատութեան Տէր Տեղակալ Գէորգ Արքեպիսկոպոսը Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարքարանին դիմեց հետևեալ հեռագրով.

Կ. Պոլիս 25 ապրիլի ս. Էջմիածին

Պատրիարքարան Հայոց

ԱՐՇԱՐՈՒՆԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ

Խնդրեմ հաղորդել մեզ Կիլիկիայում պատահած ահռելի դժբաղդութեան մանրամասնութիւնքը և այժմեան վիճակը։

Խորին զայրոյթ ամարդի բարբարոսութեան։

ՍՈՒՐԷՆԵԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ



ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

Ի ՏՓԽԻՍ Ի 29 ՄԱՐՏԻ

Առ փոխարքայն Կովկասու ԿՈՄՍ ԻԼԼԱՐԻՈՆ ԻՎԱՆՕՎԻՉ ՎՈՐՈՆՑՈՎ–ԴԱՇԿՈՎ

Միաբանութիւն Էջմիածնի և ես անձամբ պատիւ անձին համարեմք շնորհաւորել զՁերդ պայծառափայլութիւն լուսաւոր Յաղութեամբն, աղօթելով առ Փրկիչն մեր Քրիստոս շնորհել Ձեզ, բարեպաշտուհի Կոմսուհւոյն Եղիսաբեթի Անդրէեվնայի և ամենայն ընտանեաց Ձերոց քաջողջութիւն և ամս յամայր։

Տեղակալ Կաթուղիկոսի Ամենայն Հայոց **Գէորգ Արքեպիսկոպոս**

Յէջմիածին, յ30 Մարտի

Նորին Բարձր Սրբազնութեան ԳԷՈՐԳ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ։

Օրհնեալ է յարութիւն Քրիստոսի։ Ամուսինն իմ և ես մատուցանեմք զսրտագին շնորհակալիս մեր ձերումդ բարձր սրբազնութեան և միաբանութեանն Էջմիածնի վասն բարեմաղթութեանց Ձերոց, շնորհաւորելով ի մերմէ կողմանէ և զՁեզ լուսապայծառ տօնիս։

Յանձն առնեմք զմեզ սուրբ աղօթից Ձերոց

Կոմս Վորոնցով-Դաշկով։

ԲԱՂՈՒԱԾՔ ՅՕՐԱԳՐՈՒԹԵԱՆՑ ՍԻՆՕԴԻ

—Ի 21 Փետրուարի Սինոդն ըստ նախնական դաշնագրի կռելոյ ընդ վերաբնակչի Տփխիս քաղաքի ինժիներ Քիմիկոս Հմայեակի Վահանեան ի 28 հոկտեմբերի 1902 ամի կազմելով ծրագիր դաշնագրի հրամայեաց. ըստ ծրագրի կռել ընդ Հմայեակի Վահանեան զնոր պայման երեսուն և վեց ամեայ ժամանակաւ։ Թ. 110.

—Ի 23 փետրուարի Սինոդ լուեալ գյայտարարութիւն կառավարչի կալուածոց որ ի Տփխիս հրամայեաց. Թոյլ տալ կառավարչի կալուածոց Տ. Եփրեմ Վարդապետի առնել կարևոր նորոգութիւնս Էջմիածնապատկան տան, որ ի Սիմէոնովկի փողոցի ըստ մատուցեալ նախահաշուի ծախուց մինչ ց 1299 ռ. 30 կոպէկի, զկնի աւարտման նորոգութեանն մատուցանել ի Սինոդս զմանրամասն հաշիւ հանդերձ փաստաթղթովք։

—Ի նմին աւուր Սինոդ լուեալ գյայտարարութիւն կառավարչի կալուածոց, հաւան գտեալ ընդ մատուցեալ յաստակագիծն և նախահաշիւն, հրամայեաց. պատուիրել կառավարչի կալուածոց Տ. Եփրեմ վարդապետի կառուցանել ըստ այնոցիկ գշինութիւն ի «Տեսմնի բեադ» կոչեցեալ տեղւոյն ի կիր արկանելով զնիւթեղէնս Արամակլիսեան քակեալ շինութեանն նախապէս տալով գնահատել զայդ նիւթեղէնս և բառնալով զարժէս նոցին ,յ 2380 ռ. ծախուց նախահաշուին. զկնի աւարտման շինութեան մատուցանել ի Սինոդս զմանրամասն հաշիւ ծախեալ դրամոց հանդերձ փաստաթղթովք։ Թ. 112.

—Ի 25 փետրուարի Սինոդ լուեալ գյայտարարութիւն Վանական Կառավարութեան հրամայեաց, ի1-էն փետրուարի առնել զբաշխումն նպաստից չքաւորաց Վաղարշապատ գեղջ ըստ առաջի արարեալ ցուցակի ի գումար մի հարիւր երկոտասան ռուբլեաց յամիսն մինչ ցբանալ գարնան, յորմէ հետէ հանել ի ցուցակէն նպաստաւորացն նաև զայնպիսի անձինս, որք ընդունակ են աշխատանաց։ Թ. 129.

—Ի նմին աւուր Սինոդ լուեալ զգրութիւն Պ. Կ. Պ. Պրոկուրորի յաղագս անկատար գործոց հրամայեաց. նախ՝ զքննութիւն անաւարտ գործոց Սինոդիս առ 1 յունուարի ապրելոյս յանձնել Տ. Յուսիկ արքեպիսկոպոսի. Տ. Մեսրոպ, Մատթէոս և Բարգէն վարդապետաց, որք ունին առնել զքննութիւթիւնն և մատուցանել Ատենիս զհաշիւ մինչ ց 1 Ապրիլի և երկրորդ՝ զքննութիւն աւարտեալ գործոց Տնտեսական և Հաշուարարական մասանց վասն վերջին տասն ամաց յանձնել անդամոց Տէր Յուսիկ արքեպիսկոպոսի և վարդապետաց Տ. Սահակայ, Տ. Մեսրոպայ Տ. Յուսկան, Տ. Մատէոսի և Տ. Բարգէնի, որք աշխատելով յարխիւ երկ–երկու հերթիւ, ունին աւարտել զքննութիւն և մատուցանել Սինոդիս հաշիւ մինչ ց 15 օգոստոսի տարւոյս։ Թ. 125

—ց 2 Մարտի Սինոդ լուեալ զմակագրութիւն Տ. Տեղակալի հրամայեաց. ըստ պատուիրանի Տէր Տեղակալի յաւելուլ ի վերայ ծախուց նախահաշուի ՃԵմարանի Մ. Աթոռոյ վասն ներկայ ամի ա) ի ռոճիկ խմբապետի 600 ռուբլի, բ) վարձատրութիւն երկուց սեմենարի՝ ընդամենայն 400 ռուբլի և գ) ի յաւելեալ ռոճիկ չորից ուսուցչաց 600 ռուբլի, որպիսի ծախք բիւրիմացութեամբ ի բաց թողեալ էին։ Թ. 135,

—Ի 6 մարտի Սինոդ լուեալ զգործ մեղադրանաց Մկրտիչ ք. Տէր Մկրտչեան Զաքաթալա քաղաքի ի կատարման չհաս պատկի Անանիայի Օհանջանեան ընդ Եղիսաբէթի Ազայեան հրամայեաց. հատատել զեզրակացութիւն Կոնսիստորիային Ղարաբաղի որ է նախ՝ պահանջել ի Մկրտիչ քահանայէ Տէր Մկրտչեան զ 25 ռ. պատկերամին յօգուտ ծխական քահանայից պատկելոց, նաև զ 7 ռ. աթոռահասն կրկին քանակութեամբ, երկրորդ՝ արկանել ընդ 25 ռուբլի տուգանաք յօգուտ թեմական դպրանոցին Արցախի, առնելով յայս առաջին նուագ խիստ յադիմանութիւն։ Թ. 150.

—ց 9 մարտի Սինոդ լուեալ զգործ ձեռնադրութեան Սիմէոն սարգաւագի Աբրահամեան ս. Սարգիս եկեղեցի-

ւոյ Երևանայ հրամայեաց. յանձն առնել միաբանի Մայր-Աթոռոյս Տ. Մեսրոպ Արքեպիսկոպոսի վերածել զՄիմէոն սարկաւագն Աբրհամեանց ի քահանայ ծխականաց ս. Սարգիս աւադ եկեղեցւոյ Երևանայ. Թ. 166

—յ 9 մարտի Սինոդ լուեալ զյայտարարութիւն վանահօրն Խորվիրապայ Տ. Ղուկաս վարդապետի հրամայեաց. զաւանդ դրամն Խորվիրապայ վանուց արժեթղթովք 900 ռուբլեաց և առձեռն դրամովք 68 ռ. 95 կ. առաքելով ի կոնսիստորիայն Երևանայ պատուիրել նմին ծախել զարժեթուղթն ընթացիկ գնով. մասն առ մասն յերիս նուագս, տալ զայդ դրամն վանահոր վանուցն Ղուկաս վարդապետի ի չինել զպատնէշ հանդէպ Երասխ գետոյ ի պաշտպանութիւն վարելահող վանուցն ի գարնանային հեղեղից, զկնի տուչութեան մի երրորդ մասին դրամոցն կարդել չոք ի տեսանել զաշխատանս վանահօրն. Թ. 176

—ի 11 մարտի Սինոդ լուեալ զգործ ձեռնադրութեան ընակչի Դուշէթ քաղաքի նահանգին Տփխեաց Կոստանդնի Ապրելեանց հրամայեաց. թոյլ տալ Կոնսիստորիային հայոց Վրաստանի ընդունել զԿոստանդինն Ապրիլեաց ի հոգևոր կոչումն ի ձեռնադրել զնա ի քահանայ Անանուր և շրջակայ գիւղօրէից. Թ. 181

—ի 13 մարտի Սինոդ լուեալ զգործ յաղագս 313ռ. 78 կ. դրամոց յարգեանց կալուածոց ս. Երուսաղեմայ, որ ի Գանձակ, ոչ հասանելոյ վանուցն այնմիկ հրամայեաց. ունելով առաջի աչաց զի ոչ իւիք ապացուցանի եթէ 313 ռ. 78 կ. արդիւք վանուցն ս. Երուսաղեմայ մատուցեալ իցեն վեհափառ կաթուղիկոսի, ուստի զայդ դումար պահանջել ի Բենիկ վարդապետէ և առաքել ըստ պատկանելոյն Թ. 194

—ի նմին աւուր լուեալ Սինոդ զգործ հարկաժողովութեան Օշական գեղջ ի ձեռն Խորէն տարդապետի Լազարեանց հրամայեաց. ունելով առաջի աչաց, զի բաշխումն երեք խալուար քառասուն և երեք լիտր բահրայ ցորենոյ ի ձեռն նախկին հարկաժողովի Օշական գեղջ Խորէն վարդապետի Լազարեան իբր ըստ հրամանի Վեհափառ Կաթուղիկոսի ոչ ապացուցանի փաստաթղթով. ուստի պա-

հանջել ի վարդապետէն զարժէս նորին մի հարիւր երկու ռուբլի 99 կոպէկ հաշուելով 30 ռուբլի խալուարն։ Թ. 196

—Ի 18 մարտի Սինոդ լուեալ զգործ ձեռնադրութեան ընակչի Արգել գեղջ գաւառին Էջմիածնի Ղևոնդայ Տէր Զաքարեան, որ ունի վկայական երկրորդ դասարանի թեմական դպրանոցին Երևանայ հրամայեաց. թոյլ տալ կոնսիստորեային Երևանայ ընդունել զՂևոնդն Տէր Զաքարեան ի հոգևոր կոչումն ի ձեռնադրել զնա ի քահանայ ծխականաց Դսխոս գեղջ։ Թ. 201

—Ի 18 Մարտի Սինոդ լուեալ զգործ շինութեան յաջորդարանի և հոգևոր կառավարութեան Հին Նախիջևանի հրամայեաց՝ ըստ յայտարարութեան հոգևոր Կառավարութեան հին Նախիջևանի ի 25 փետրուարի տարւոյս Թ. 175, թոյլ տալ նմին առնել շինութիւն յաջորդարանի և բնակարանի Հոգ. Կառավարութեան, ծախելով յայդ պէտս միայն զարդիւնս ուխտատեղւոյն «Քամու խաչի» մինչ ցաւարտ շինութեանն և զամենատեսակ կամաւոր նուէրս ըստ ժապաւինեալ մատենի, զոր ունի տալ կոնսիստորիան և ըստ յատակագծի, կազմելոյ ի ձեռն մասնագիտի։ Թ. 202

—Ի նմին աւուր լուեալ զգործ յափշտակութեան դրամարկղ Կոնսիստորիային Ղարաբաղի հրամայեաց. ճանչելով զՄուշեղ ա. քահանայն Վարդապետեան յանցաւոր ի գործի յափշտակութեան 2823 ռ. 75 կ. ի գանձարանէ Կոնսիստորիային Ղարաբաղի ըստ իւրում իսկ խոստովանութեան և յիւրացումն 661 ռ, 62 կ. վիճակային արդեանց, պատուիրել Կոնսիստորիային Ղարաբաղի նախ՝ յանձնել զնա իդատ մարմնաւոր իշխանութեան ի ձեռն պրոկուրորի շրջանային դատարանի ըստ 3 կ. 354 յոդ. պատժական օրինաց, առաքելով առնա զթարգմանութիւն օրագրիս և զկարևոր թղթեան ի գործոյն և ի ժամ վճռոյ գործոյն ի դատարանի կարգել զոք ի պաշտպանութիւն քաղաքացիական պահանջանացն և երկրորդ՝ իպատճառս գաղման վիճակային դրամոցն դադարեցուցանել զՄուշեղ ա. քահանայն ի քահանայագործութենէ մինչ ցվախճան գործոյն ի մարմնաւոր դատարանի, տնօրինելով զհսկութեն է ծխականաց նորա։ Թ. 207